ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am,
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.01.2020
344-57

ՀՀ արդարադատության նախարար
Ռուստամ Բադասյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բադասյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2019 թվականի դեկտեմբերի 19-ին տեղեկություն ստանալու հարցում էր ուղարկել Ձեր գերատեսչություն՝ խնդրելով տրամադրել 2019 թվականի ընթացքում իրականացրած գնումների մասին քանակական տվյալներ:

ԻԱԿ-ին տրամադրված պատասխան գրության մեջ պահանջվող տվյալները բացակայում են, ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ գնման ընթացակարգ է իրականացրել Ձեր գերատեսչությունը 2019 թվականի ընթացքում:
2. 2019 թվականի ընթաքում քանի՞ գնում է իրականացրել գերատեսչությունը մեկ անձից:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան